



32. ՅՈՒԹ ՌԱՆԳ ԳԻՆՈՒ ՀԵՔԻԱԹ

Տերտեր մե շատ սուտխոսան կէղնի, քիչ մը լե տախտակ պակաս կէղնի, չըմեն հաղ օր քարոզ կը կարդա մըջ ժամուն՝ սուտ մը կըսե:

— Յերեկ գիշեր գացեր ենք աստծու մոտ: Աստված ընձի ըսեց. «Տերտե՛ր, դու բարով իս էկի, ի՞մալ իս, քու ժողովուրդ ի՞մալ է, ի՞նչ գուզիս, ըսե տամ»: Ես լե ըսի. «Աստվա՛ծ, քու խոտներուն մեռնիմ, հմալ գորութեն մե տուր, օր քելիմ վըր շըրին, իմ խոտներ չը տղկի»: Աստված ընձի լսեց, քելեցի, իմ խոտներ չը տղկան:

— Տեր հայր, կըսե էն դիեն հալվոր մե, իզա խըդար տարի կապրիմ վըր ախշըրքին, հմա չըմ լսերի, որ մարդ դաստված տեսնա:

— Մարդ ի՞մալ չրի վրեն քելե ու ուր խոտքեր չը տղկի, ըսե, սա՛նք, ձեն կիտա ուրիշ մե:

— Արդար մարդոց հետ կը պատահի, օղնածնե՛ր,— պատասխան կիտա տերտեր:

Մարդիկ կը ծիծղան, տերտեր կը սսկի:

Ուրիշ օր մե՛ տերտեր էլման կըսե:

— Էն տարին իմ չեզնեբուց մեկն օր փիցավ, չելա գացի մըտ փաշեն, ըսի. «Փա՛շա աֆանգի, իմ մեկ չեզ փիցեր է. գարուն օր բացվի, լծքեր չելնան, իմ տղեկներ ի՞մալ պտի էնին: Փաշեն չելավ կանավ խոտի, ըսեց. «Քեշի՛շ, ըշտե քըզի չեզ մը փեշքեշ»: Յեղն առա էկա տուն, մեր լուծքն էրինք:

— Տևրտեր,— կըսե մարդ մե,— խուլայի է, օր փաշեն քըզի չևղ մե իդա, հմա օր կըսիս քելավ կանավ իմ դեմ, ըսկի խելքիս չը պարկի: էն ո՞ր փաշեն է օր քոտքի գելնա տերտերոշ մե քառեջ:

— Գելնա, լա՛ո, գելնա, չըմքի ես տերտեր իմ:

Մարդիկ զգլուխ ուրանց կը կախին:

Օրերուց օր մե՛ էլման քարոզ կը կարդա, կըսե.

— Օռչնածնե՛ր, ձըզի պատմութեն մե էնիմ, օր ձեր մատներ խաթիք: Ես ու իրիցկնիկ կովեր ենք, խռովեր ենք քիրարուց: Յելա իմ թազմին տեսա, գացի, գացի, գացի, նստա նխշուն գամի մե, քիշս Ստամբուլ, կանա թագավորի քոշկ ու սարի քառեջ, տեսնամ՝ թագավորի կնիկ զուր խաս շորեր հագուկ, նստուկ է փանջարեն: Ջիսի օր տեսավ, ըսեց. «Տե՛րտեր, տե՛րտեր, բանձըրցի իմ մոտ»: Օր ձեն տվեց՝ քըշի գացի մըտ թագավորի կնիկ, տեսնամ՝ սեղան մե բացեր է, հազար տեսակ կերակուլ վրեն, մեշտեղ լե դրուկ յոթ ոանգ գինի:

— Յոթ ոանգ գինի՞:

— Հա՛, օռչնածներ, յոթ ոանգ գինի: Կերանք, խմեցինք, չըմքի գինուց մարդ կը կարմըրի, կարմըրա, էղա հազարան վարդ: Բադավորի կնիկ զիսի գրկեց, ըսեց. «Տե՛րտեր, օր քըզի քառջի հեղ տեսա, ծռա քու վրեն, մկա ես՝ քըզի, դու՛ ընձի, ի՞մալ էնինք փախնինք, օր թագավոր շիմնա»: «Բան մե կէնինք» ըսի, ու էլման խմի զէդ յոթ ոանգ գինին, քոքըշկցա, բունի զթագավորի կնկան պագի, ըսի. «Վո՛լա, ես՝ քըզի, դու՛ ընձի»:

— Հը քու տուն ավիրի, հա՛,— կըսե էլման էն ըխտիար մարդ,— իդա խըդար տարի կապրիմ վըր ախշըրքին, հմա հմլա սուտ չըմ լսերի: Չըս ամչնա, գետին չըս մը՞տնա, տերտեր:

Ժողովուրդ էն դիեն կը բոռա, կը վժա.

— Սուտ կըսե՛, սուտ կըսե՛:

Կըսին՝ էդ վըժոցի վըրեն՝ տերտեր ժամուց ուր փիլոնով կը փախնի, օր էլման սուտ խսա էնե, հմա քո՛ւր կը փախնի, մարդ չը գինա:

